անձինքը, որոնք առաջ վատնում էին վանքի եկամուտները, կը թշնամանային Հայրիկի հետ:

— Բայց միթէ՞ Հայրիկը բարեկամներ չունի:

— Ունի, բայց Հայրիկի բարեկամները այնպիսի կարող, այնպիսի հզօր մարդիկ չեն, որպէս նրա թշնամիները: Հայրիկի բարեկամները ժողովրդի հալածուած, հարստահարուած եւ ամէն իրաւունքներից զրկուած դասակարգն է: Հայրիկի բարեկամները աղքատ շինականներն են, քաղաքի արհեստաւորներն են, եւ անտուն, անտեղ, անհող, անջուր սարակներն ու բանոորներն են, եւ մի քանի երիտասարդներ, որոնք ազնիւ սիրտ եւ բարի ցանկութիւններ ունեն, բայց իրանց ցանկութիւնները կատարելու համար ոչինչ միջոցներ չունեն:

Հայրիկը եկեղեցական աստիճանով դեռ վարդապետ էր, բայց նրա կատարած գործերը, ստացած հռչակը, վայելած ժողովրդական մեծ համարումը, այդ բոլորը չէին կարող չգրգռել միւս եկեղեցականների նախանձը, որոնք թէ՛ աստիճանով եւ թէ՛ դիրքով աւելի բարձր էին քան թէ նա, թէեւ երիտասարդ աբեղան նրանց թշնամութիւնը բացատրում էր միայն տնտեսական պատճառներով: Նրա կառուցած նոր հիմնարկութիւնները՝ իրանց նորութեամբ անգամ՝ կարող էին օտարոտի եւ վնասակար թոել միւս եկեղեցականներին: Նա հիմնել էր իր վանքում մի գիշերօթիկ դպրոց, որը մի տեսակ վարժապետանոց կարելի էր համարել, ուր հաւաքել էր նա զանազան տեղերից մանուկներ, այն նպատակով, որ վարժապետացուք կամ կրթեալ քահանայացաք պատրաստոեն եւ, վերադառնալով իրանց հայրենիքը, գիւղական քահանաներ կամ վարժապետներ դառնան: Դպրոցը ունէր եւ երկրագործական բաժին: Գիւղական վարժապետը կամ գիւղի քահանան, Հայրիկի կարծիքով, բաւական չէ, որ պէտք է սովորեցնէին գրել, կարդալ, հաշոել, կամ կատարէին գիւղացու հոգեւոր, եկեղեցական պէտքերը, այլ, միեւնոյն ժամանակ, նրանք պէտք է ցոյց տային, թէ որպէս պէտք է գիւղացին վարէր իր հողը եւ որպէս պէտք է դարմանէր իր անասունները, որ աւելի արդիւնք ստանար: Բացի դպրոցից, Հայրիկը զանց չէր արել հիմնել կրթութեան երկրորդ գործիչը՝ տպագրական մամուլը: Նրա տպարանից լոյս էին տեսնում զանազան դասագրքեր եւ, ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու համար, փոքրիկ դիւրիմաստ գրքոյկներ աշխարհիկ լեզոով, այլեւ մի ամսագիր, որ խմբագրւում էր գլխաւորապէս նրա միաբանութեան աշխատութեամբ: Այդ բոլորի ի կատար ածելը՝ արժանի էր այնքան մեծ ջանքերի եւ այնքան անտանելի տառապանքների, որոնց դէմ միայն Հայրիկի նման մարդու երկաթեայ հաստ ատամտութիւնը կարող էր պատերազմել: Քանի՛ — քանի՛ ան-